ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի, Երևանի պետական համալսարանի և Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի միջև

ք. Երևան

20 մարտի 2023թ.

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ՝ **Հանձնաժողով**)՝ ի դեմս Հանձնաժողովի նախագահ Գեղամ Գևորգյանի, Երևանի պետական համալսարանը (այսուհետ՝ **Համալսարան**)՝ ի դեմս Համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի և Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը (այսուհետ՝ **Ֆակուլտետ**)՝ ի դեմս Ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանի (այսուհետ՝ **Կողմեր**)

Կարևորելով բուհ-աշխատաշուկա համագործակցության ընդլայնման անհրաժեշտությունը, նպատակ հետապնդելով բարձրացնել տնտեսական մրցակցության պաշտպանության կարգավորումների արդյունավետությունը և բարձրագույն որակավորմամբ համապատասխան մասնագետների պատրաստումը՝ համատեղ հետաքրքրություն ներկայացնող աշխատանքների և ծրագրերի իրականացման միջոցով,

Համոզված լինելով, որ Համալսարանի՝ ի դեմս Ֆակուլտետի մասնագիտական ներուժի, ինչպես նաև Հանձնաժողովի գործունեության ընթացքում կուտակված փորձի ու կարողության համադրմամբ հնարավոր կլինի նպաստել ՀՀ տնտեսությունում մրցակցային հարաբերությունների զարգացմանը, իսկ գիտականորեն հիմնավորված որոշումների ընդունումն անհրաժեշտ հիմքեր կստեղծի մրցակցության պաշտպանության ոլորտի կատարելագործման համար,

Վստահ լինելով, որ ուսանողների և հավանական այլ շահառուների ներգրավվածությունը Հանձնաժողովի աշխատանքներին կնպաստի մասնագիտական ոլորտում նրանց գիտելիքի, գործնական հմտությունների և կարողությունների զարգացմանը,

Կնքեցին սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ **Հուշագիր**) հետևյալի մասին:

1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1.1. Սույն Հուշագրի նպատակն է ապահովել տնտեսագիտության և կառավարման ոլորտներում անհրաժեշտ համագործակցություն Հանձնաժողովի և Համալսարանի միջև՝ աջակցելու Կողմերի գործունեությանը և նպաստելու ուսանողների գիտելիքների, գործնական հմտությունների և կարողությունների զարգացմանը:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Համագործակցությունը նախատեսվում է իրականացնել հետևյալ ուղղություններով.

2.1.1. տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտին վերաբերող կրթական ծրագրերի մշակման և իրականացման գործընթացում Ֆակուլտետը, ըստ նպատակահարմարության, իր մասնագետների հետ համատեղ ներգրավում է Հանձնաժողովի ներկայացուցիչներին.

2.1.2. Ֆակուլտետի կողմից ուղեգրման դեպքում ուսանողների պրակտիկայի կազմակերպում Հանձնաժողովում.

2.1.3. Հանձնաժողովի կադրերի բանկի ձևավորման նպատակով Ֆակուլտետի ուսանողների և շրջանավարտների ներգրավում.

2.1.4. Հանձնաժողովի կողմից ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի, ինչպես նաև գիտահետազոտական թեմաների ներկայացում.

2.1.5. Ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերում տնտեսական մրցակցության պաշտպանության առնչությամբ համապատասխան դասընթացների և առարկաների նախատեսում.

2.1.6. Հանձնաժողովի գործունեության տարբեր ոլորտներում, Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրություններում և այլ աշխատանքներում Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների ներգրավում.

2.1.7. Կողմերի միջև փորձի փոխադարձ փոխանակում, այդ թվում՝ վերապատրաստումների, բաց դասերի, համատեղ հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ կլոր սեղանների, սեմինարների և այլ ձևաչափով քննարկումների կազմակերպում.

2.1.8. համատեղ հետազոտական նախագծերի իրականացում, տնտեսական մրցակցության պաշտպանությանն առնչվող այլ հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտությունների, զեկույցների, հոդվածների ժողովածուների, գիտակրթական և գիտագործնական նյութերի հրատարակում:

2.2. Կողմերը նպատակահարմար են գտնում մշտապես քննարկել և մշակել համագործակցության առավել արդյունավետ այլ ձևաչափեր՝ կրթական ծրագրերի կատարելագործման և գործարար մակարդակում դրանց կիրառման նպատակով:

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1. Հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակներում Հանձնաժողովն իր հայեցողությամբ և ըստ անհրաժեշտության Ֆակուլտետին է տրամադրում տնտեսական մրցակցության պաշտպանությանը վերաբերող հայեցակարգերի, ռազմավարական բնույթի փաստաթղթերի և իրավական ակտերի նախագծերը, հրավիրում է վերջինիս ներկայացուցիչներին Հանձնաժողովի աշխատանքային խորհրդակցություններին և այլ ձևաչափերով քննարկումներին մասնակցելու համար, ապահովում է ուսանողների պրակտիկայի կազմակերպումը:

3.2. Հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակներում հետազոտություն և ոլորտային ուսումնասիրություններ իրականացնելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ նաև Ֆակուլտետը:

3.3. Ֆակուլտետն իրավունք չունի Հուշագրի շրջանակներում Հանձնաժողովի կողմից տրամադրված տեղեկությունները և փաստաթղթերը, այդ թվում՝ հայեցակարգերը, ռազմավարական բնույթի փաստաթղթերի, իրավական ակտերի նախագծերը և վերլուծական նյութերն օգտագործել ոչ ծառայողական նպատակներով, հրապարակել, տարածել, բացահայտել, տրամադրել կամ որևէ այլ կերպ հայտնի դարձնել դրանք երրորդ անձանց: Այս պահանջը Ֆակուլտետի ներկայացուցիչները պարտավոր են պահպանել նաև աշխատանքային հարաբերություններն ավարտելուց հետո:

3.4. Ֆակուլտետը համագործակցության շրջանակում Հանձնաժողովից ստացված տեղեկությունները հետազոտության, ոլորտային ուսումնասիրություններ իրականացնելու կամ որևէ այլ ծառայողական օգտագործման նպատակով կարող է հրապարակել միայն Հանձնաժողովի գրավոր համաձայնությունը ստանալուց հետո:

4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

4.1. Հուշագրով սահմանված համագործակցությունը համակարգում և վերահսկում են Կողմերի ղեկավար մարմինները՝ լիազորված ներկայացուցիչների միջոցով:

5. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

5.1. Հուշագրում փոփոխությունները և լրացումները կարող են կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և պետք է ձևակերպվեն առանձին արձանագրություններով: Արձանագրություններն ուժի մեջ են մտնում Կողմերի կողմից ստորագրվելուց հետո և կազմում են սույն Հուշագրի անբաժանելի մասը:

6. ՀՈՒՇԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:

6.2. Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ նրանցից մեկի նախաձեռնությամբ՝ այդ մասին առնվազն մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելու դեպքում:

6.3. Հուշագիրը Կողմերի համար չի առաջացնում պարտավորություններ, չի պարունակում պարտադիր կատարման ենթակա դրույթներ, այն հաստատում է վերջիններիս միջև համագործակցության ցանկությունը և պատրաստակամությունը:

6.4. Հուշագիրը կազմված է հայերեն լեզվով երեք հավասարազոր օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ	ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ	ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ
ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ	ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ
Ստորագրություն	Ստորագրություն	Ստորագրություն